ՆԱԽԱԳԻԾ-Ա

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքապետարանի «Ջրային կառույցների» ՓԲԸ-ից որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.07.2009թ. հ.2531736 վկայական/ ընկերությանը պատկանող Հալաբյան փողոցի հ.31/2 հասցեում գտնվող 1356.0քմ մակերեսով հողամասը ու 374.8քմ մակերեսով շինությունը և թվով 3 ավտոմեքենաները՝ համաձայն կից հավելվածի:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու որոշման նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Հալաբյան փողոցի h.31/2 հասցեում «Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.07.2009թ. h.2531736 վկայական /1356քմ մակերեսով հողամասը ու 374.8քմ մակերեսով շինությունը և թվով 3 ավտոմեքենաները՝ համաձայն կից հավելվածի:

Քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Հաշվի առնելով ընկերության գրությունը անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի կողմից Երևան համայնքին նվիրաբերվող գույքերը:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույք ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2024թ. հ. –Ա որոշման

ՑԱՆԿ
Երևան համայնքին նվիրաբերվող գույք

Ավտոմեքենայի մակնիշ	տարեթիվ	պետհամարանիշ	հաշվառման վկայագիր	հաշվեկշռային /մնացորդային/ ՀՀ դրամ
Hyundai H100	1997թ.	212LU01	PB837284	815.302
Chevrolet Cruze	2013թ.	771LU01	SB993024	3.732.184
Volkswagen ID4 Crozz Pure Plus	2022թ.	340CQ61	YB120511	15.188.831